



### ՊԼՈՎԴԻՎԻ ՀԱՅ ՆՈՐ ԳԱՂՈՒԹԻ ԾԱԳՈՒՄԸ<sup>1</sup>

Հայ ժողովուրդը երկար դարեր իր հայրենի հողին կառչած-մնացած է հակառակ դրույթուն հալածանքներու և քաղաքական խոշոր վերիվայրումներու:

989 թվականին, ռուսերը քրիստոնեությունը ընդունելէ հետո, Կիևյան Ռուսաստանի և Բյուզանդիոնի միջև հաստատուեցան բարեկամական հարաբերություններ: Իշխան Վլատիմիր հաճախ ռազմական օգնության կփութար Բյուզանդիոնի: Այդ նույն շրջանին հայերը սերտ կապեր ունեին Բյուզանդիոնի հետ<sup>2</sup> և բավական խոշոր դեր կը խաղային անոր քաղաքական և մշակութային կյանքին մեջ:

Բյուզանդական բանակներու մեջ հայկական զինվորական գունդեր քիչ չէին թվով: Այսպիսի պայմաններու մեջ հայեր և ռուսեր բյուզանդական բանակներու մեջ հաճախ համատեղ կռիվներ կնդեին Փոքր Ասիո, Սիցիլիայի, Կրետեի և ուրիշ դրացի երկիրներու մեջ:

Ռուսերը հնագույն ժամանակներէ ի վեր բարձր գնահատած են հայոց ռազմական արվեստը: Կիևյան իշխանները արտաքին հարձակողական ուժերու դեմ իրենց երկրին սպառնացող վտանգի դեպքերուն, հաճախ կդիմեին հայերու ռազմական օժանդակության:

Այդ մասին հայ պատմաբան Հ. Բուշներ-

յան կգրէ թե ռուս իշխանները հայերը առաջին անգամ Կիև կհրավիրեն 1009 թվականին, Բորիսլավ Խրոխտի դեմ մղվող պատերազմին իրենց օգնության համար<sup>3</sup>:

IX դարու 60-ական թվականներուն Վոլգայի և Դնեպրի միջև ընկած հողամասի վրա ամրացած պոլովցի ցեղախումբեր, հաճախ կհարձակեին Կիևի իշխանին պատկանող երկիրներու վրա: Նորահայտ գրավոր աղբյուրներու համաձայն, Կիևյան իշխանները պոլովցիներու դեմ պայքարելու համար օգնության կհրավիրեն նաև հայեր: Այդպիսի հրավեր տեղի ունեցած է 1062 թրվականին, շուրջ 910 տարիներ առաջ իշխան Իզյասլավ Յարոսլավիչի կողմէ<sup>4</sup>:

Նույն իշխանը հայերու խոստացած է, որ երեք տարի ծառայելէ հետո իր բանակին մեջ, իրավունք կունենան մշտական բնակություն հաստատել Կիևի և կամ շրջակա հողերու վրա<sup>5</sup>:

Այդ պայմանով մի քանի հազար հայեր, հատկապես Ղրիմի Անիի գաղթականներէն, կմեկնին Կիև և կմասնակցին պոլովցիներու դեմ մղված պատերազմներուն: Հայ զորականներու անձնվեր ու քաջարի պայքարը կգնահատվի ռուսերու կողմէ և անոնցմէ շատեր ըստ պայմանագրության մշտական բնակություն կհաստատեն հոն:

Այստեղ Կիևէն շուրջ 240 կմ դեպի հարավ-արևմուտք, Դնեստր գետի աջ կողմը

<sup>1</sup> Լրացավ 300 տարիներ ադր թվականն երբ անդժվեց Պլովդիվի (Բուլղարիո) նոր հայ գաղութը: Հարմար կնկատենք ի հիշատակություն համառոտակի ծանոթացնել «Էջմիածին» համդեսի հարգելի ընթերցողները բուլղարահայ պատմության հետ առնչություն ունեցող այս դեպքին:

<sup>2</sup> Պրոֆ. Լևչենկո, Բյուզանդիայի պատմությունը:

<sup>3</sup> Հ. Գրիգորյան, Հայ և ռուս ժողովուրդներու դարավոր բարեկամությունը:

<sup>4</sup> «Колонизация армян юго-западной России», Каменец-Подольск, 1903 г.

<sup>5</sup> Պրոֆ. Լ. Մելիքսեթ-բեգ, Հին Ռուսիան և հայերը:

գտնվող Սմոնիչ գետի եզերքը կհաստատվին ու կշեմեցնեն Կամենեց, ինչպես նաև շրջակա Լուցկ, Վլատիմիր և այլ քաղաքներ: Այլեի ոչ 13-րդ դարում Կամենեցի շուրջ կհիմնվին նաև Հայկական Արմյանե և Արմյանսկի գուտ հայաբնակ գյուղերը:

XVI դարում Կամենեցի հայ ընտանիքներում թիվը կհասնի շուրջ 1200-ի<sup>6</sup>: Քաղաքին մեջ կկառուցվին հայկական թաղամասեր ու փողոցներ, հայկական ազգային ոճով բնակելի շենքեր, աղոթավայրեր և ամրոթյուններ: Մինչև այսօր ալ Կամենեց-Պոթյուններ: Մինչև նաև հայկական տաճարի մը դրվակի մեջ կմնան հայկական տաճարի մը մնացորդները, ինչպես նաև Հայկական փողոց<sup>7</sup>:

Այստեղ հաստատվող հայերը կստանան մեծ առանձնաշնորհումներ և արտոնություններ, ինչպես նաև ներքին ինքնավարություն և դատարաններ: Դարեր կտևե հոս հայոց ազատ և բարգավաճած կյանքը, նույնիսկ երբ այդ երկրամասը կանցնի Լեհաստանի տիրապետության տակ: Սակայն շուտով կսկսին լեհ-թրքական պատերազմները: Առաջին անգամ 1620 թվականին սուլթան Օսման 2-րդի բանակները կպաշարեն Կամենեց-Պոդոլսկ քաղաքը, բայց շուտով ետ կմղվին:

Սուլթան Մեհմետ 1648—1687 թթ. Լեհաստանի դեմ բռուն պայքար կմղե և առաջին առթիվ կգրավե Կամենեցը, որու հայ, ռուս և լեհ ազգաբնակչությունը ոչ միայն կկեղեքվին, այլ անոնց աղոթատեղիներն ունակը կվերածվին մզկիթներու: Մյուս կողմանե լեհական կաթոլիկ կղերը ամեն գնով կհզոնե տեղացի հայերը անպայման կապել հոռոմեադավան եկեղեցուն և ընդունիլ տալ կաթոլիկությունը: Առաջին անգամ լատինական ծեսով պատարագ կկատարվի 1663-ին Կամենեցի հայկական եկեղեցիներն միույն մեջ: Ժողովուրդը ամուր փարած իր ազգային ավանդություններուն կփախչի մոտակա Արմյանե և Արմյանսկի գյուղերը:

Սուլթան Մեհմետ կորոշե գաղթեցնել տեղացի հայերը Փոքր Ասիո պատերազմներն ամայացած հայկական գավառները<sup>8</sup>:

Կամենեց-Պոդոլսկի հայ երևելիներեն ունակը, որոնք հավատարիմ մնացած էին Էջմիածնի, կորոշեն գաղթել դեպի Տանկաստան: Հիշատակարան մը որ մինչև մո-

տերս կմնար Պոլդիվի հայկական եկեղեցիի արխիվներու մեջ կնկարագրե հայոց վերագաղթը դեպի Թուրքիա<sup>9</sup>: Անձանոթ կմնան անշուշտ պատճառները, որոնք թելադրած են հայերուն անմիջապես ընդունել սուլթանի հրամանը և ուղել վերաբնակիլ Տանկաստանի մեջ: Նույնպես անձանոթ կմնա գաղթողներու թիվը: Երեք նավերու մեջ տեղավորված անոնք կնավարկեն Սև ծովու վրա, ճամփա ելլելով Դնեստրի գետաբերանով դեպի հարավ: Ուժգին փոթորիկներու բռնված այդ փոքր նավերն մին կհասնի Վառնայի մոտ Կալաթա կոչված վայրը, երկրորդը կմոտենա Սոգուպոլի, իսկ երրորդը հողմավար կբշվի դեպի Սև ծովու թրքական ափերը, ուր կբայքայի իրեն հետ ծովամույն ընելով Կամենեցի 97 հայեր: Անկասկած Կամենեցի հայերեն ունակը օսմանյան բանակի հետ Ադրիանապոլիս կուգան ու հոն կհաստատվին: Մնացյալ երկու նավերու ճամփորդները բեղբարդցի ճրջանավոր հայազգի Ասրո Չելեքիի միջնորդությամբ և շնորհիվ սուլթանին Իրադեին կհաստատվին Պոլդիվ (Փ. Պոլիս):

Կամենեցի հայերու Պոլդիվ հաստատումը չափազանց հուզիչ և տխուր կըլլա: Ծուտով Պոլդիվի մեջ համաճարակ մը կուգա գաղթականներուն մեջ նոր ավերներ գործել:

Հայերը կթողուն Կամենեց 1673-ին, իսկ վերջնականապես կհաստատվին Պոլդիվ 1675-ին, երբ կստանան նաև իրենց այժմու աղոթատեղին:

Անկասկած բավական մեծ թվով հայեր մնացած պիտի ըլլային Կամենեց-Պոդոլսկի մեջ և շրջակա գյուղերը<sup>10</sup>:

Վերջերս հրատարակված կարևոր փաստաթուղթերու համաձայն 50 տարի հետո մեծ թվով կամենեցցի հայեր Մինաս վարդապետի ղեկավարությամբ, կրկին կփորձեն թողուլ Կամենեցը և վերադառնալ Կովկաս և կամ Թրքահայաստան: Այժմ Կամենեց-Պոդոլսկ քաղաքը, որու մասին անկասկած կհետաքրքրվին հարգելի ընթերցողները, կգտնվի Ուկրաինական Սովետական

<sup>6</sup> Լ. Խաչիկյան, Հայկական գաղթավայրեր Ուկրաինայում XVI—XVIII դարերում:

<sup>7</sup> Վ. Պելան, Путешествие в юность, „Огонёк“, 1963, III.

<sup>8</sup> Ս. Վ. Հովնանյան, Հայ-բուլղարական պատմական կապերը և բուլղարահայ գաղութները XIX դարի երկրորդ կեսին, Երևան, 1968, էջ 43—44:

<sup>9</sup> Սույն հիշատակարանի մասին առաջին անգամ կհիշվի Պոլդիվի «Գրասիրաց» ընթերցարանի 80-ամյա հոբելյանին առթիվ 1918-ին հրատարակված գրքուկին մեջ, ինչպես նաև 1929-ին Երվանդ Եպիսկ. Փետրասեճյանի «Վ. Պոլսոյ հայ գաղութի ծագում» երկին մեջ:

<sup>10</sup> Վ. Ոսկանյան և Վ. Մարտիրոսյան, Նոր փաստաթուղթեր հայ ազատագրական պայքարեն, «Պատմա-բանասիրական հանդես», թիվ 4, 1962, Երևան:

Սոցիալիստական Հանրապետության սահմաններու մեջ, ունենալով շուրջ 30 հազար բնակիչներ, որոնցմէ շատեր շատափողներն են ժամանակի շեն հայկական գաղութին:

Քաղաքի մեջ կան բազմաթիվ դպրոցներ, Գարտարարվեստական ձեռնարկություններ, թատրոն և պատմական թանգարան մը: Պահպանված է նաև 15-րդ դարուն շինված Կամենեցի բերդը:

Ահա այսպես կակսի հայկական նոր գաղութի կյանքը Պլովդիվի մեջ, որը 3 դարու շրջան մը կբոլորեն և որու ընթացքին մեծ թվով հայեր եկան հոս օսմանյան պետության զանազան գավառներէ 1896, 1905, 1913, 1918, 1922-ին և այլ ժամանակներու ընթացքին ստեղծելու համար այսօրվա շուրջ 6000-ոց հայկական գաղութը:

Նպատակ չենք ունեցած երբեք ամբողջական պատմությունը ընել մեր գաղութին, որը ոչ միայն 300 տարվան այլ նույնիսկ ավելի քան 1400 տարվան հնությունն մը ու-

նի<sup>11</sup>, եթե նկատի առնենք, որ հին թրակիական, բյուզանդական և լատինական շրջաններէն պալիդիկյան, թոնդրակեցի, մանիքեական հայ աղանդավորներ բնակեցան հոս, ինչպես նաև հայկական բազմաթիվ զինվորական միավորումներ, որոնք կղըրկվեին Բյուզանդիոնի կողմէ երկրի այս կողմերը, պաշտպանելու համար սահմանը օտար նվաճողներէ:

Փափաքելի է մոտիկ ապագայի մեջ տեսնել բուլղարահայ գաղութի պատմության հրատարակությունը, որը անկասկած գիտականորեն հագեցված ամբողջական պատկերը պիտի տա մեր գաղութի անցյալին:

**Պլովդիվ**

<sup>11</sup> Հ. Գյակոնով, Խեթեր, փոյուգիացիներ և հայեր, «Տեղեկ. Հայկական ՍՍՀ ԳԱ-ի», 1956: Լեչենկո, Բյուզանդիայի պատմությունը: Նաև Д. Дегев, Характ эристка на тракийски язык, 1951.

